

ՄԻԶԱԶԳՎԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ – ՆԱՏՕ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ
(1990-ԱՎԱՆ ԹԹ.)

ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության զարգացման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական փուլի՝ պասիվ և ակտիվ: Առաջին փուլը, որը սույն հոդվածի ուսումնասիրման առարկան է, ընդգրկում է 1990-ական թթ., երբ կողմերը զբաղված էին տարբեր մակարդակներով և ոլորտներում հարաբերությունների հաստատման խնդիրներով: Այս փուլում (1992 թ.) Հայաստանն անդամակցեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին (ՀԱՀԽ), ապա (1997 թ.) դրա ժառանգորդ եվրաստլանտյան գործընկերության խորհրդին (ԵԱԳԽ)՝ ստանալով Դաշինքի հետ քաղաքական ուղիղ երկխոսության մեջ մտնելու հնարավորություն: Բացի այդ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի (1994 թ.) շնորհիվ կողմերը գործնական կապեր հաստատեցին տարբեր ոլորտներում (այդ թվում՝ ռազմական համագործակցության)՝ ընդունելով և իրականացնելով անհատական գործընկերության մի քանի ծրագրեր: Երկրորդ փուլը ներառում է 2000-ական թթ., երբ հարաբերություններն ընդլայնվեցին: Հայաստանը (2002 թ.) միացավ ԳՀԽ պլանավորման և վերանայման գործընթացին (ՊՎԳ, *անգլ.* PARP), հյուրընկալեց մի շարք խոշոր զորավարություններ ու միջոցառումներ ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների մասնակցությամբ: 2004 թ. Հարավային Կովկասում նշանակվեցին Դաշինքի հատուկ ներկայացուցիչ և կապի սպա: Բացի այդ՝ մշակվեց և ընդունվեց Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ) (առաջին ԱԳԳԾ-ն Հյուսիսատլանտյան խորհրդին ներկայացվեց 2005 թ.), հայաստանյան խաղաղապահ զուսմարտակ ուղարկվեց Կոսովո (2004 թ.), սակրավորներից և բժիշկներից բաղկացած խումբ մեկնեց Իրաք (2005 թ.), Հայաստանում պաշտոնապես բացվեց ՆԱՏՕ-ի տեղեկատվական գրասենյակը (2006 թ.), որոշում ընդունվեց Աֆղանստանում տեղակայված ՆԱՏՕ-ի Միջազգային անվտանգության օժանդակության ուժերին (ISAF) Հայաստանի մասնակցության մասին (2009 թ.):

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների առաջին փուլում նկատվող զգուշավորությունը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով¹: Կողմերի համագործակցությունն այս փուլում, պատկերավոր ասած, ծանո-

¹ Այդ հանգամանքների շարքում, անշուշտ, առանձնահատուկ տեղ են գրավում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները և Հայաստանի մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրին (իսկ հետագայում դրա հիման վրա ստեղծված կազմակերպությանը), սակայն ռուսական գործոնը միակը չէ, որ 1990-ականներին ազդել է Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ընթացքի ու խորության վրա:

թության նպատակ էր հետապնդում: 1990-ականների սկզբին աշխարհաքաղաքական նոր պայմաններում ՆԱՏՕ-ն տարված էր հետասառըպատերազմյան աշխարհում իր տեղն ու դերը գտնելու և Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի նախկին սոցիալիստական պետություններին արևմտյան անվտանգության համակարգին ինտեգրելու խնդրով, իսկ անկախություն ձեռք բերած Հայաստանը կենաց-մահու պայքար էր մղում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնիշխանության իրավունքի ապահովման համար ու առաջին քայլերը կատարում ժողովրդավարական պետականության շինարարության ասպարեզում: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած քառսային ամիսներին կողմերը պարզապես զգուշորեն փորձում էին բացահայտել միմյանց ու հասկանալ, թե ոչ վաղ անցյալում հակառակորդ ճամբարի մաս կազմող կողմը ինչ շահեր ու նպատակներ է հետապնդում «նոր աշխարհակարգի» պայմաններում:

1992 թ. սեպտեմբերին Հայաստանում ոչ պաշտոնական այցով գտնվող Հյուսիսատլանտյան դաշինքի պատվիրակության անդամները, խոսելով ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի (ԽՎ) հետ համագործակցության հնարավորությունների մասին, նշում էին, թե մինչև օրս ԽՎ-ն «առաջնահերթ ուշադրություն էր դարձնում Ռուսաստանին, Ուկրաինային, Բելառուսին և վերջերս նաև՝ բալթյան երկրներին: Ինչ վերաբերում է կովկասյան հանրապետություններին, ապա նրանք դեռևս «խաղից» դուրս են մնում»²: Խաղից դուրս այս վիճակը շտկելու նպատակով պատվիրակության ղեկավարը՝ ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հարցերով հատուկ խորհրդական Քրիս Դոնելին, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Գ. Ղազինյանի և պաշտպանության գծով պետական նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանի հետ կայացած հանդիպումների ժամանակ շեշտում էր, որ «ՆԱՏՕ-ն անսպառ աղբյուր է, որից կարելի է ստանալ ինֆորմացիա, որին կարելի է դիմել, հաղորդակցվել և համագործակցել: ՆԱՏՕ-ն չի պարտադրում իր կարծիքը, չի միջամտում երկրների ներքին գործերին: ՆԱՏՕ-ի հետ համագործակցությանը կնպաստի Հայաստանի ակտիվությունը պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներով»³: Փաստորեն, այս շրջանում ՆԱՏՕ-ն փորձում էր գովազդել իրեն որպես մի կառույց, որը, ինչպես Դոնելին էր նշում, «գնալով ստանում է ավելի շատ քաղաքական, քան ռազմական կազմակերպության բնույթ» և մասնագիտական օժանդակություն էր առաջարկում Հայաստանին (ուսում ՆԱՏՕ-ի հատուկ դպրոցներում, ճանաչողական այցելություններ պաշտոնյաների, լրագրողների, գիտնականների համար և այլն), ըստ որում, հատուկ շեշտվում էր, որ խոսքը զենք վաճառելու մասին չէ: ՆԱՏՕ-ն ցանկանում էր ծանոթանալ Հայաստանում և Արցախում տիրող իրավիճակին, հավաքել տեղեկություններ տարածաշրջանի զինված ուժերի, նրանց քանակի, որակի և նրանց շարքերում տիրող տրամադրությունների մասին: Իսկ Հայաստանին արցախյան պատերազմի այդ թեժ փուլում հետաքրքրում էր՝ արդյոք Ղազինքը կարող է ներազդել իր անդամ Թուրքիայի կառավարության վրա՝ հայադրեջանական հակամարտության համատեքստում անաչառ դիրքորոշում որդեգրելու հարցում, քանի որ Թուրքիան անուղղակիորեն մասնակցում էր այդ հակամարտությանը՝ Ադրբեջանին տրամադրելով բազմաբնույթ օգնություն, մասնավորապես՝ պատրաստելով ադրբեջանական ռազմական մաս-

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 84, թերթ 82:

³ Նույն տեղում, թ. 81-82:

նագետներ: Պաշտոնական Երևանին մտահոգում էր նաև այն խնդիրը, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրները շատ հաճախ խեղաթյուրված տեղեկատվություն են ստանում մեր տարածաշրջանում կատարվող գործընթացների մասին: Ուստի այս շրջանում Երևանի խնդիրն էր Դաշինքի անդամ պետություններին հասցնել իր արտաքին քաղաքականության հիմնական ուղերձը, այն է՝ Արցախը արդարացի ազգային-ազատագրական պայքար է մղում, և որ առանց Հայաստանի օժանդակության արցախահայությունը վաղուց բնաջնջված կլիներ: Երևանում գիտակցում էին, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը հեռանկարային է, սակայն այդ կազմակերպությունից շոշափելի ռազմական աջակցություն ակնկալելն անհիմաստ էր՝ հաշվի առնելով Թուրքիայի անդամությունն այդ կառույցում⁴: Ավելին, վերոհիշյալ հանդիպումից պարզ դարձավ, որ Դաշինքի հետ համագործակցության ծավալման հարցերը քննարկելիս աչքաթող չի կարելի անել նաև հոգեբանական այն բարդություները, որոնք ձևավորվել էին սառը պատերազմի տարիներին⁵: Այդ անջրպետը հաղթահարելու համար նույնպես ժամանակ էր պետք: 1990-ականների սկզբին, փաստորեն, ձևավորվել էր մի իրավիճակ, երբ ոչ Հյուսիսատլանտյան դաշինքը, ոչ էլ ՀՀ-ն, տարբեր դրդապատճառներից ելնելով, **լուրջ** հետաքրքրություն չունեին միմյանց նկատմամբ, ինչը, սակայն, չի նշանակում, թե նրանց համագործակցության փորձերն անհիմաստ ու աննպատակ էին:

1993 թ. ԱՄՆ-ի առաջ քաշած, իսկ 1994 թ. հունվարին ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի ընդունած ԳՀԽ ծրագիրը ռազմական ոլորտում համագործակցության հնարավորություն ընձեռեց ՆԱՏՕ-ի և դրան չանդամակցող երկրների (այդ թվում և Հայաստանի) միջև, ընդ որում՝ Դաշինքի նորաթուխ գործընկեր պետությունները հնարավորություն ստացան մշակելու կազմակերպության հետ համագործակցության առանձնահատուկ ձև՝ ընտրելով գործակցության ուղղություններն ու ծավալները՝ համաձայն իրենց ազգային շահերի: Դաշինքի ներկայացուցիչները չէին ժխտում, որ ԳՀԽ ծրագիրը կարող էր տեխնիկական հիմք ստեղծել ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնման համար: Սակայն, նկատի ունենալով Ռուսաստանի խիստ բացասական վերաբերմունքը ՆԱՏՕ-ի ընդլայնման հանդեպ, ծրագիրը վաղաժամ անդամություն չէր ենթադրում: Մոսկվան ՆԱՏՕ-ի ընդլայնման փոխարեն առաջարկում էր (և այսօր էլ շարունակում է առաջարկել) *համաներկայական* անվտանգության համակարգի ստեղծում, որը հիմնված կլիներ համաներկայական առկա կառույցների (հատկապես ԵԱՀԿ-ի) լիազորությունների մեծացման վրա: Հաշվի առնելով ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում Ռուսաստանի դիրքորոշումը՝ ծրագրին ՀՀ մասնակցության խնդրի կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարության պայմանագրաիրավական և արտաքին հարաբերությունների (ՊՆ ՊԻ և ԱՀ) վարչությունն իր կազմած վերլուծական-լրատվական տեղեկանքում եզրակացնում էր, որ ԳՀԽ նախաձեռնությունից համագործակցության որոշակի համակարգի անցումը երկար գործընթաց է և ամենակարևորն այդ հարցում ՌԴ ու ՀՀ կարծիքների ու շա-

⁴ ՀՀ ԱԳՆ Ղարաբաղի աշխատախմբի՝ 1993 թ. հոկտեմբերի 10-ի «Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող մի քանի հարցերի վերաբերյալ որոշ երկրների դիրքորոշումները» փաստաթղթում շեշտվում է, որ ՆԱՏՕ-ն, հակված լինելով պաշտպանել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ԼԴ հակամարտության մասին ընդունած որոշումները, համամիտ է նախ «գրավյալ» տարածքներից հայկական զորքերի դուրսբերման թուրք-ադրբեջանական տեսակետին (տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (ՊԴԱ), ց. 1, գ. 18, թ. 140):

⁵ Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 326, ցուցակ 9, գործ 84, թերթ 89:

հերի ճիշտ համադրումն է: Ուստի ԳՀԽ-ին միանալու մասին որոշման ընդունման ժամանակ կարևոր էր համարվում հասնել այն բանին, որ ՀՀ-ն ժամանակին կարողանա ծանոթանալ Դաշինքի՝ սահմանակից պետությունների հետ համագործակցության ծրագրերին: Պաշտպանության նախարարության պատասխանատուների կարծիքով, Հայաստանը պետք է նախաձեռնող ու հարձակողական դիրքորոշում ընդուներ ԳՀԽ հետ հարաբերությունների համակարգի ստեղծման ժամանակ՝ հաշվի առնելով Ռուսաստանի կարծիքը և շահերը⁶: նշանակալի չափով ազդելու ՆԱՏՕ-ի և Հայաստանին հարակից երկրների ապագա հարաբերությունների բնույթի վրա: Այս նպատակին հասնելու համար փաստաթղթում խորհուրդ էր տրվում չխուսափել ԳՀԽ օրակարգի մշակման կոմիտեի աշխատանքներին մասնակցելուց⁷: Միաժամանակ, ԱԳՆ ռազմաքաղաքական վարչության մասնագետների՝ ԳՀԽ-ին նվիրված վերլուծական տեղեկանքում, որտեղ նույնպես քննարկվում է Հայաստանի՝ ծրագրին միանալու նպատակահարմարությունը, մեծ կարևորություն է տրվում Մոսկվայի հնարավոր արձագանքին: «Հայաստանը, ընդգրկված լինելով մի շարք միջազգային կառույցներում (ՀԱՀԽ, ԵԱՀԽ, ԱՊՀ), բնականաբար, չի կարող անտեսել ԳՀԽ-ն, որն ուղղված է վերը նշված կազմակերպություններին անդամակցող երկրներին: Ղարաբաղյան հակամարտությունը, բնականոն հարաբերությունների բացակայությունը Թուրքիայի հետ ստիպում են հանրապետությանը ողջախոհ մոտեցում ցուցաբերել ԳՀԽ առաջարկությանը՝ հաշվի առնելով միակ դաշնակից Ռուսաստանի հնարավոր մոտեցումները և արձագանքները: Հայաստանն անդամակցում է ԱՊՀ շրջանակներում գործող Հավաքական անվտանգության պայմանագրին, որը երաշխիք է ծառայում Հայաստանի անվտանգության ապահովման համար և սահմանում հայ-ռուսական սերտ համագործակցություն ռազմական բնագավառում: Նման բնույթի ռազմական համագործակցություն ՆԱՏՕ-ի հետ նախատեսում է նաև ԳՀԽ-ն: Վերջինիս Հայաստանի հնարավոր անդամակցության դեպքում Ռուսաստանը կարող է նախանձախնդիր մոտեցում ցուցաբերել՝ նկատի ունենալով իր կենսական շահերը տարածաշրջանում: Հայաստանը, չանտեսելով Մոսկվայի դիրքորոշումն այս հարցում, պետք է կատարի լուրջ քաղաքական քայլեր ԳՀԽ-ի ուղղությամբ՝ հաշվի առնելով Ռուսաստանի առայժմ դրական արձագանքը»⁸:

Հայաստանը ԳՀԽ ծրագրին միացավ 1994 թ. հոկտեմբերի 5-ին, երբ ստորագրեց «Գործընկերության շրջանակները սահմանող փաստաթուղթը»: 1995 թ. հունվարի 13-ին Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև ստորագրվեց «Անվտանգության պայմանագիր» (ուժի մեջ է մտել 1999 թ.), որով սահմանվում էին ԳՀԽ-ի շրջանակներում դասակարգված փաստաթղթերի փոխանակման ընթացակարգերը և փոխադարձ պարտավորություններն այդ ոլորտում: 1995 թ. փետրվարի 3-ին ՀՀ կառավարության թիվ 55 որոշմամբ ստեղծվեց «Հյու-

⁶ Հարկ է նշել, որ սույն տեղեկանքի վերաբերյալ կազմված դիտողություններում ՀՀ ԱԳՆ ռազմաքաղաքական վարչությունն ընդգծում է, որ «հնարավոր համագործակցության դեպքում Հայաստանն իրոք պետք է դառնա ակտիվ գործընկեր, որը կենթադրի Հայաստանի մասնակցությունը համագործակցության շրջանակներում յուրաքանչյուր փաստաթղթի ձևավորման աշխատանքներին: Եվ այստեղ, հակառակ ՊՆ-ի կարծիքի, ամենևին էլ անհրաժեշտություն չկա ընդունելու հարձակողական կեցվածք» (ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 49, թ. 84):

⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 49, թ. 77-78:

⁸ ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 182, թ. 14-15:

սիսատվանտյան պայմանագրի կազմակերպության «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում Հայաստանի Հանրապետության մասնակցության կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հանձնաժողով», որը զբլխավորում էր ՀՀ արտաքին գործերի նախարարը: 1996 թ. ապրիլի 9-ին ՀՀ-ն ՆԱՏՕ-ի ղեկավարությանը տրամադրեց իր, այսպես կոչված, «Ներկայացման փաստաթուղթը», որով որոշվում էին կողմերի միջև համագործակցության հիմնական ոլորտները, ուղղությունները և ծավալները⁹: ԳՀԽ-ին միանալով՝ Հայաստանն առավելապես ձգտում էր կանխել Ղաշինքի և իր հարևան երկրների միջև այնպիսի համագործակցության ընդլայնումը, որը կարող էր սպառնալիք ներկայացնել ՀՀ անվտանգությանը, ինչպես նաև ցանկանում էր բարձրացնել իր միջազգային հեղինակությունը: Սակայն, ինչպես վերևում նշվեց, կարևոր էր, որ ԳՀԽ-ին մասնակցությունը վնաս չհասցնի հայ-ռուսական հարաբերություններին: Ուշագրավ է նաև, որ 1994 թ. սեպտեմբերի 19-ին (այսինքն՝ ԼՂ-ում զինադադարի կընթումից մի քանի ամիս անց) ՌԴ-ում Նիդեռլանդների դեսպանատան ռազմական կցորդի տեղակալի հետ ՀՀ ՊՆ-ում կայացած հանդիպման ժամանակ ՊՆ ՊԻ և ԱՀ վարչության պետ, գնդապետ Ռ. Ավագյանը, ի պատասխան հյուրի այն հարցին, թե ինչպես է ՀՀ-ն տեսնում ԳՀԽ-ի դերը Ղարաբաղում խաղաղություն հաստատելու գործում, ասաց հետևյալը. «Ղարաբաղը խաղաղություն է ուզում, միմիայն խաղաղություն: Թե դրանք որ երկրները կհաստատեն, որքան զորքով, դա կարևոր չէ: Թեև, ցանկալի է, որ խաղաղարար ուժեր մտցնեն ոչ թե մեծ պետությունները, որոնք այստեղ կունենան իրենց հետաքրքրություններն ու շահը, այլ փոքրերը»¹⁰: Պատասխանից ակնհայտ է, որ պաշտոնական Երևանը ԳՀԽ-ն որպես տարածաշրջանում խաղաղարար ուժերի տեղակայման թեկնածու չէր համարում:

Անկախության առաջին տարիներին ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող միջոցառումներին (հատուկ դասընթացներ, սեմինարներ, խորհրդաժողովներ) Հայաստանը գործում մասնակցություն չէր ունենում նաև ֆինանսական միջոցների սղության պատճառով: Այդօրինակ միջոցառումներից էին Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին (ԵՍՁՈւ) պայմանագրի համաձայն ՆԱՏՕ-ի վերահիշակող-համակարգող կոմիտեի կազմակերպած սպառազինության և տեխնիկայի կրճատման բազմազգ տեսչությունները (ՀԲԱՏ), որոնց ՀՀ ՊՆ-ն նպատակահարմար ու անհրաժեշտ էր համարում մասնակցել, սակայն, ինչպես իմանում ենք ԱԳՆ և ՊՆ տեղեկանքներից, ֆինանսական դժվարություններից ելնելով, ժամանակ առ ժամանակ ստիպված էր լինում հրաժարվել մասնակցությունից՝ ի տարբերություն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների և նույնիսկ Ադրբեյջանի, որոնք ակտիվ էին այդ ոլորտում¹¹:

⁹ Այդ փաստաթղթում հեռանկարային ճանաչվեց ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը ռազմաքաղաքական, գիտական, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում (մանրամասն տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 182, թ. 20-28):

¹⁰ ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 49, թ. 126:

¹¹ Տե՛ս նույն տեղը, թ. 137, նաև՝ ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 50, թ. 95, գ. 51, թ. 17: Հայաստանի ներկայացուցիչները, ինչպես ձևակերպվում է ԱԳՆ պաշտոնական գրագրության մեջ, «տարբեր պատճառներով» տևական ժամանակ չէին կարողանում մասնակցել նաև ՆԱՏՕ-ի Քաղաքացիական արտակարգ իրավիճակների պլանավորման գլխավոր կոմիտեի ու գործընկեր պետությունների համատեղ նիստերին և այլ միջոցառումների (տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 1, գ. 63, թ. 1-2, 74):

Չնայած ԳՀԽ-ին Հայաստանի մասնակցությունը ՆԱՏՕ-ի հետ գործնական համագործակցության իրականացման հիմնական ձևաչափն էր, այդուհանդերձ 1990-ականներին հանրապետությունն ակտիվորեն չներգրավվեց այդ ծրագրում: Այսպես, թեպետ ԳՀԽ-ի հիմնադրումից մինչև նոր հարյուրամյակի սկիզբը Հայաստանն ընդունել ու կյանքի է կոչել Դաշինքի հետ անհատական գործընկերության երեք ծրագիր՝ 1996-98-ի, 1997-99-ի և 1998-2000 թթ. համար¹², այդուհանդերձ, ինչպես ԱԳՆ տեղեկանքներից մեկում է նշվում. «Այդ ընթացքում, չնայած Հայաստանի անհատական գործընկերության ծավալի և ԱԳԾ-ում ընդգրկված Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցության ոլորտների ու միջոցառումների քանակի աճի՝ իրական համագործակցությունը առայժմ չի իրականացվում: 1999 թ. Հայաստանը մասնակցել է միայն 10 միջոցառման»¹³:

ՀՀ-ն գործնական համագործակցության ասպարեզում առկա հիշյալ բացը ձգտում էր լրացնել Դաշինքի հետ քաղաքական ուղիղ հարաբերությունների ընդլայնման միջոցով, որի համար պլատֆորմ էր ծառայում Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը: Վերջինիս փոխարեն 1997 թ. ստեղծվեց Եվրատլանտյան գործընկերության խորհուրդը (ԵԱԳԽ)¹⁴: ՀՀ պաշտոնական աղբյուրներում բազմիցս հիշատակվում է, որ մեր երկիրը մասնակցել է ԵԱԳԽ արտաքին գործերի և պաշտպանության նախարարների, շտաբների պետերի կանոնավոր հանդիպումներին, դեսպանների և մշտական կոմիտեների նիստերին, դրանց ընթացքում՝ փաստաթղթերի նախապատրաստմանն ու կարծիքների փոխանակմանը, սակայն հետագա համագործակցության շրջանակներում մտադիր է ակտիվացնել ոչ թե դեկլարատիվ, այլ գործնական մասնակցությունը ԵԱԳԽ տարբեր մակարդակներով հանդիպումներին, ԵԱԳԽ հովանու ներքո կազմավորված կովկասյան խմբի աշխատանքներին, տարբեր ձևաչափերի քաղաքական խորհրդակցություններին և այլն¹⁵: Այդուհանդերձ, ֆինանսական խնդիրները կամ պատասխանատու գերատեսչությունների կրավորականությունը հաճախ թույլ չէին տալիս կենսագործել հիշյալ մտադրությունները: Այսպես, ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության ծառայողական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության մասնագետների բացակայության պատճառով 2001 թ. Հայաստանը չի մասնակցել արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտի ԵԱԳԽ/ԳՀԽ ոչ մի սեմինարի

¹² Գործընկեր պետությունները ԳՀԽ ծրագրի հիման վրա կազմում և Դաշինքին են ներկայացնում Անհատական գործընկերության ծրագրեր (ԱԳԾ): Դրանք, ըստ էության, ՆԱՏՕ-ի և յուրաքանչյուր գործընկեր պետության միջև իրականացվող համագործակցության ծրագրերն են, որոնք իրականացվում են ԳՀԽ շրջանակներում: ԱԳԾ-ները պարտադիր իրավական ուժ չունեցող փաստաթղթեր են, որոնք արտացոլում են կողմերի քաղաքական համձայնությունները:

¹³ ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 179, թ. 134:

¹⁴ Այս կառույցն ընդգրկում է ՀԱՀԽ-ի շրջանակներում ծավալվող քաղաքական գործունեությունը և ԳՀԽ-ով նախատեսված ռազմական գործնական համագործակցության ոլորտը: Հայաստանը, մյուս 28 գործընկեր պետությունների հետ մեկտեղ մասնակցելով դաշնակից և գործընկեր պետությունների արտագործնախարարների 1997 թ. մայիսի 30-ի հանդիպմանը, ստորագրեց ՀԱՀԽ-ը ԵԱԳԽ վերակազմավորվելու Հիմնարար փաստաթուղթը և դարձավ ԵԱԳԽ հիմնադիր անդամ:

¹⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՂԱ, ց. 5, գ. 179, թ. 133:

կամ որևէ այլ միջոցառման, և դա այն դեպքում, երբ Հայաստանը արտակարգ իրավիճակների կառավարման բնագավառում համագործակցությունը հռչակել է ՆԱՏՕ-ի հետ գործակցության առաջնայնություններից մեկը¹⁶:

ՀՀ ԱԳՆ ռազմաքաղաքական վարչության 1997 թ. փաստաթղթերից մեկում շեշտվում է, որ ՆԱՏՕ-ի սպասվելիք ընդլայնումը եվրաստրատեգիայի տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական իրավիճակ կարող է ստեղծել՝ վերաբաշխելով Արևմուտքի ու Ռուսաստանի միջև ազդեցության գոտիները՝ հօգուտ առաջինի¹⁷: Այդ պայմաններում, ԱԳՆ-ի փորձագետների կարծիքով, Հայաստանի շահերը թելադրում են խուսափել հնարավոր մեկուսացումից¹⁸: Նրանց համոզմամբ, ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունները նպատակահարմար է զարգացնել երեք հիմնական ուղղություններով. ա) ՆԱՏՕ-ի միասնական կառույցներ, բ) Դաշինքի առանձին անդամ-պետություններ և անդամության հնարավոր թեկնածու երկրներ, գ) Արևմտաեվրոպական Միություն (ԱԵՄ)՝ որպես ՆԱՏՕ-ի դե-ֆակտո եվրոպական սյուն: Ի հավելումն 1996-1998 թթ. Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության ծրագրի լիարժեք իրագործմանը՝ փաստաթղթում առաջարկվում է աշխուժացնել ԳՀԽ շրջանակներում քաղաքական և ռազմական փոխգործակցությունը, կապեր հաստատել ՆԱՏՕ-ի ոչ կառավարական հաստատությունների (Ատլանտյան պայմանագրի ասոցիացիա/ATA, Հյուսիսատլանտյան ասամբլեա/NAA) հետ, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում և միացյալ գինված ուժերի շտաբում (SHAPE) բացել ՀՀ մըշտական ներկայացուցչություններ, ակտիվ քաղաքական խորհրդատվություններ անցկացնել 16+1 ձևաչափով: Փաստաթղթի հեղինակների համոզմամբ, այդ ամենը ՀՀ-ին հնարավորություն կտար տեղյակ լինել Դաշինքի ընթացիկ գործունեությանը և ժամանակին ներգրավվել դրանում, կնպաստեր ՀՀ պաշտոնական դիրքորոշման պարզաբանմանը, կամրապնդեր Հայաստանի միջազգային հեղինակությունը: Ավելին, «ՆԱՏՕ-ի հետ քաղաքական կապերի խորացումն անհրաժեշտ է նաև Ադրբեջանի և նրան սատարող թուրքիայի ակտիվացումը հնարավորին չափ փոխհատուցելու համար: ... ՆԱՏՕ-Հայաստան կապերը ցանկալի է զարգացնել նաև տարածաշրջանի ենթատեքստում (16+N ձևաչափ)՝ անհրաժեշտության դեպքում համադրելով որոշ գործողություններ Վրաստանի և, հնարավոր է, Ռուսաստանի հետ»¹⁹:

1997-99 թթ. Անհատական գործընկերության ծրագրի վերաբերյալ ԱԳՆ մասնագետների առաջարկություններում նույնպես անդրադարձ է կատարվում տարածաշրջանային համատեքստին: Ընդգծելով, որ ՀՀ-ՆԱՏՕ երկրորդ ԱԳԾ-ի մշակման ընթացքում կողմերի համագործակցության ուղրտները որոշելու համար անդրկովկասյան մյուս պետությունների փորձի ուսումնասիրումը օգտակար կարող է լինել՝ «Առաջարկությունների» հեղինակները փաս-

¹⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 172-173:

¹⁷ Այդ մասին տե՛ս ԱԳՆ ռազմաքաղաքական վարչության «Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև հարաբերությունների զարգացման հնարավոր ուղիների մասին կարծիքը», նույն տեղը, թ. 82-83:

¹⁸ Նկատենք, որ այս շրջանում ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցում Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը պայմանավորված էր երկու հիմնական սկզբունքներով. ա) Հայաստանը հարգում է ցանկացած պետության իրավունքը՝ ընտրելու կամ փոխելու սեփական անվտանգությունն ապահովող կառույցները, բ) ոչ մի պետություն իրավունք չունի իր անվտանգությունն ապահովելու այլ երկրի հաշվին (տե՛ս նույն տեղը, թ. 82-83):

¹⁹ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 78, թ. 126-128:

տում են, որ Վրաստանը և Ադրբեջանը անցած տարիներին բավականին ակտիվացրել են իրենց կապերը ՆԱՏՕ-ի հետ, օգտվում են Դաշինքի հարուստ փորձից և կազմակերպում են բարձրաստիճան պատվիրակությունների փոխայցեր և համատեղ սեմինար-խորհրդակցություններ: Նշելով, որ վրաց պաշտոնյաները բազմիցս հայտարարել են, որ ՆԱՏՕ-ին անդամակցելը Վրաստանին ձեռնտու է թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական տեսակետից՝ ՀՀ ԱԳՆ մասնագետները ներկայացնում են իրենց ենթադրությունն առ այն, որ Վրաստանը փորձում է օգտագործել ՆԱՏՕ-ի հետ հնարավոր մերձեցումը որպես լրացուցիչ ճնշման լծակ Ռուսաստանի վրա՝ իր ներքին խնդիրները լուծելու համար: Անդրադառնալով ՆԱՏՕ-Ադրբեջան հարաբերություններին՝ ԱԳՆ փորձագետները նշում են, որ ՆԱՏՕ-ի ներսում Ադրբեջանին զգալիորեն աջակցում է Թուրքիան և որ Բաքուն ողջունել է ՆԱՏՕ-ի գործողությունները բալկանյան ճգնաժամի լուծման գործում և քննարկում է այդ կազմակերպությանը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման մեջ ներգրավելու տարբերակներ, իսկ ԱԳ նախարար Հասան Հասանովը անգամ հայտարարել է, որ եթե Դաշինքը մերժի իրենց 99 անգամ, իրենք կդիմեն հարյուրերորդ անգամ²⁰: «Առաջարկությունների» հեղինակները այն կարծիքին են, որ հարևան երկրների՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններն ամրապնդելու ցանկությունը կարող է գրգռել առանց այդ էլ Դաշինքի ընդլայնման հեռանկարից նյարդայնացած Մոսկվային՝ այդպիսով Անդրկովկասը վերածելով Արևմուտքի և Ռուսաստանի հակոտնյա շահերի բախման գոտու: Իրադարձությունների այդօրինակ զարգացման հեռանկարը «ստիպում է Հայաստանին վարել շատ զգույշ և հավասարակշռված քաղաքականություն ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև: Հաշվի առնելով, որ Հայաստանը տնտեսական և ռազմական երկկողմանի բազմաթիվ պայմանագրեր է ստորագրել Ռուսաստանի Դաշնության հետ, ինչպես նաև ՀՀ տարածքում ռուսական ռազմական հանրությունները, և այն փաստը, որ Ադրբեջանը այդ հանգամանքները օգտագործում է Անդրկովկասյան տարածաշրջանում Հայաստանին որպես Ռուսաստանի քաղաքականության կողմ ներկայացնելու համար, ռազմաքաղաքական հարցերի վարչությունը նպատակակախարմար է գտնում զուգահեռաբար ակտիվացնել ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները՝ հավասարակշռելու «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում մեր և Վրաստանի ու Ադրբեջանի միջև ստեղծված «դիսբալանսը»²¹:

Այսպիսով, 1997 թ. Հայաստանում արդեն նկատվում էր ՆԱՏՕ-ի հետ կապերը խորացնելու միտում, սակայն հատկանշական է, որ խոսքը գերազանցապես քաղաքական կապերի ամրապնդման մասին էր, և, ինչպես նախորդ տարիներին, այս շրջանում նույնպես ՀՀ արտաքին գործերի գերատեսչությանը շարունակում են մտահոգել երկրի հեղինակության ամրապնդման և հակառակորդ Ադրբեջանի միջազգային ազդեցության թուլացման խնդիրները: Պաշտոնական երևանը նշված պատճառներով չի կարողանում կամ չի ցանկանում վարել ակտիվ և նախաձեռնողական քաղաքականություն ՆԱՏՕ-ի նկատմամբ և շարունակում է պահպանել արձագանքողի իր կեցվածքը: Հարաբերությունների զարգացման ազդակները հիմնականում գալիս են Բրյուսելից:

²⁰ Տե՛ս նույն տեղը, ց. 5, գ. 179, թ. 192-193:

²¹ Տե՛ս նույն տեղը, թ. 194:

Այս իմաստով ուշագրավ է նաև, որ, ի տարբերություն ՆԱՏՕ-ի գործընկեր մյուս պետությունների, Հայաստանը ՆԱՏՕ-ին կից առաքելություն է հիմնում և Գործընկերության համադրման օղակում կապի սպա է նշանակում ուշացումով (1998 թ. ամռանը)²²: ԱԳՆ տարեկան հաշվետվություններից մեկում մտահոգություն է արտահայտվում այն առիթով, որ ՆԱՏՕ-ի շտաբ-կայանում և Գործընկերության համադրման օղակում կապի սպա են նշանակել կամ կապի գրասենյակ են հիմնել ԳՀԽ բոլոր պետությունները: Միակ բացառությունն էին Հայաստանն ու Ղրղզստանը, որոնք իրենց կապն իրականացնում էին ՆԱՏՕ-ի կողմից նշանակված սպաների միջոցով (ըստ այդմ, որպես Հայաստանի կապի սպա այդ ժամանակ հանդես էր գալիս թուրքական զինված ուժերի փոխգնդապետ Սավաշ Բիչերը): Հաշվետվության հեղինակները նշում են, որ «Բրյուսելում ու Մոնզում կապի սպաների նշանակումը համարում ենք հրատապ: Այս խնդրի կարևորությունն ավելի է ընդգծվել հատկապես ԵԱԳԽ-ի հիմնադրումից հետո: ... Կապի սպա չունենալով ՆԱՏՕ-ում՝ Հայաստանը գրկվում է Դաշինքի հետ ուղղակի և լիարժեք գործընկերություն զարգացնելու հնարավորությունից և մնում է անհարկի մեկուսացման մեջ, ի տարբերություն մնացած գործընկերների: ... ՆԱՏՕ-ում գրասենյակ հիմնելու հարցում այսուհետ ևս հապաղելն արդեն սկսում է արժեզրկել մեր գործընկերությունը»²³: Ուշագրավ է, որ, հաշվետվության հեղինակների համոզմամբ, ֆինանսական խնդիրները այս դեպքում հիմնական խոչընդոտը չեն, քանի որ ՆԱՏՕ-ն ունի հատուկ հիմնադրամ (այսպես կոչված «Վարչավայի նախաձեռնություն»), որից օգտվում են Վրաստանն ու Ադրբեջանը՝ Բրյուսելում ու Մոնզում կապի գրասենյակներ պահելու համար²⁴:

Չնայած այն հանգամանքին, որ քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ-ն պաշտոնական մակարդակով բազմիցս հայտարարում է, որ մտադիր է ակտիվացնել իր ոչ թե դեկլարատիվ, այլ գործնական մասնակցությունը թե՛ ԵԱԳԽ-ի, թե՛ ԳՀԽ շրջանակներում իրականացվող զանազան միջոցառումների, այդուհանդերձ, մինչև 2000-ականների սկիզբը պաշտոնապես փոխլրացման քաղաքականություն որդեգրած ՀՀ-ին զանազան օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չի հաջողվում հասնել գոհացուցիչ արդյունքների ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերություններում: ՀՀ ԱԳՆ Անվտանգության համագործակցության բաժնի 2000 թ. մարտի 23-ի տեղեկանքում թվարկված են ՆԱՏՕ-ի հետ կապերում առկա խնդիրներն ու զգալի բացերը. «Մինչ օրս ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները զարգացել են ավելի շատ Դաշինքի ջանքերով, քան Հայաստանի կողմից ցուցաբերվող շահագրգռվածությունից ելնելով: Մասնակցությունը միջոցառումներին չի կրել համակարգված բնույթ, թույլ է իրականացվել միջգերատեսչական համադրումը:

²² 1994 թ.՝ ԳՀԽ ծրագրի նախաձեռնումից հետո, ՆԱՏՕ-ն գործընկեր պետություններին հնարավորություն ընձեռեց կապի գրասենյակ ստեղծելու կամ կապի սպաներ նշանակելու ՆԱՏՕ-ի բրյուսելյան կենտրոնակայանում և Գործընկերության համադրման օղակում, որը գտնվում է Բելգիայի Մոնզ քաղաքում: Այդ գրասենյակները/սպաները համադրում էին իրենց պետության և Դաշինքի միջև օպերատիվ հարցերի շուրջ համագործակցության, Անհատական գործընկերության ծրագրերի կազմումն ու վերանայումը և ակտիվ մասնակցություն ցուցաբերում ԳՀԽ-ի շրջանակներում իրականացվող աշխատանքներին:

²³ ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 5, գ. 179, թ. 108:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

եղել են դեպքեր, երբ որոշ միջոցառումներին Հայաստանի ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելությունը չի տեղեկացվել, ԱԳՆ իր հերթին երբեմն տեղյակ չէր պահվում մասնավորապես պաշտպանության նախարարության ներկայացուցիչների ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպվող միջոցառումների մասնակցությանը: Այս կացությունը հիմնականում պայմանավորված է ոչ թե ֆինանսական միջոցների բացակայությամբ (դա իր հերթին է խոչընդոտում ԱԳԾ-ների իրականացմանը), այլ Ռաշինքի հետ համագործակցության քաղաքական հստակ կողմնորոշման բացակայությամբ: ԱԳՆ արդեն ստանում է ահազանգեր, որ ԳՀԽ ծրագրում Հայաստանի պասիվ մասնակցությունը երբեմն ՆԱՏՕ-ի կողմից անցանկալի՝ համապատասխան քաղաքական դիրքորոշման գնահատական է ստանում: ... Կարծում ենք, որ այս ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման հապաղումը կարող է նպաստել Հայաստանի մեկուսացմանը, թուլացնելով ՀՀ-ի դիրքերը որպես տարածաշրջանային լրջագույն գործունի: Ի վերջո ակնհայտ է մեկ բան, որ քաղաքական խոչընդոտներ աշխարհի ամենակազմակերպված կազմակերպության հետ հարաբերությունների պատշաճ մակարդակի վրա պահպանման համար չկան»²⁵:

Այսպիսով, 1990-ական թթ. Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև հաստատված հարաբերությունները, չնայած զանազան նախաձեռնություններին ու հայտարարություններին, այդպես էլ էական բովանդակություն չստացան: Ռապայմանավորված էր մի շարք պատճառներով: Նախ, Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած առաջին մի քանի տարիներին Արևմուտքը խուսափում էր լուրջ դերակատարություն ստանձնել Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության խնդիրներում, քանի որ քաջ գիտակցում էր, որ իր կարողություններն այս տարածաշրջանում սահմանափակ են: Բացի այդ՝ Արևմուտքի երկրները չէին ցանկանում հարուցել Ռուսաստանի դժգոհությունը և վստահ չէին, որ անվտանգության հետ կապված գործընթացներում ներգրավվելը տարածաշրջանում սեփական շահերը հետապնդելու լավագույն միջոցն է: Ռաշնակից Ռուսաստանի դժգոհությունը չէր ցանկանում հարուցել նաև Հայաստանը, սակայն Մոսկվայի հետ հարաբերությունները չփչացնելը միակ պատճառը չէր, որ դանդաղեցնում էր Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը 1990-ական թթ.: ՀՀ ազգային արխիվի և արտաքին գործերի գերատեսչության արխիվի՝ հետազոտողներին մատչելի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական դժվարություններն ու ներքին տարածայնությունները և միջգերատեսչական կապերի թույլ համակարգվածությունը նույնպես արգելակիչ գործոնի դեր են խաղացել, հաճախ ստիպել պաշտոնական Երևանին կրավորական կեցվածք ընդունել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ հարաբերություններում: Այդուհանդերձ, տարիների ընթացքում Արևմուտքի համար Հարավային Կովկասում ներգրավման բազմաթիվ նոր և գրավիչ հնարավորություններ ներկայացան, իսկ արևմտյան հետաքրքրությունների շրջանակներն ընդլայնվեցին ու դարձան առավել հստակ: Թեպետ սկզբում Արևմուտքի աշխուժացումը Հարավային Կովկասում արժանացավ Ռուսաստանի խանդոտ վերաբերմունքին, այդուհանդերձ ժամանակի ընթացքում այն միայն ուժեղացավ: Եթե 1990-ականների ընթացքում ՆԱՏՕ-ի և նրա առաջատար անդամ-պետության՝ Միացյալ

²⁵ Նույն տեղում, թ. 142:

Նահանգների ուշադրությունը գլխավորապես գամված էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինտեգրման վրա, ապա 21-րդ դարասկզբին դաշինքի ուշադրության կենտրոնում հայտնվեցին եվրասիական տնտեսական տեղափոխությունը տեղ զբաղեցրած Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունները: Դաշինքի 2004 թ. ստանբուլյան գագաթնաժողովն ամրագրեց այդ երկու տարածաշրջանների մաս կազմող երկրների, այդ թվում Հայաստանի ռազմավարական կարևորությունը կազմակերպության համար, ինչին հետևեցին երկկողմ հարաբերությունների ակտիվացմանը միտված բազմաթիվ ծրագրեր և նախաձեռնություններ: ՀՀ-ն դրական արձագանքեց ՆԱՏՕ-ից եկող նոր ազդակներին և ձեռնամուխ եղավ գործընկերության խորացմանն ուղղված առավել շոշափելի քայլերի իրականացմանը, որի շնորհիվ կողմերի հարաբերությունները թևակոխեցին նոր՝ առավել գործունե փուլ:

АГАСИ АРУТЮНЯН – *Первая стадия развития сотрудничества между Арменией и НАТО (1990-е годы)*. – Историю развития сотрудничества между Арменией и НАТО можно условно разделить на две стадии. Первая, относительно пассивная стадия охватывает 90-е гг., когда новосозданная Республика Армения и Североатлантический альянс положили начало своим отношениям на разных уровнях и в разных сферах. Вторая, более динамичная фаза развития взаимных связей характеризуется большими усилиями сторон по обеспечению крепких партнерских отношений. Автор на базе архивных документов анализирует некоторые из причин пассивности Армении в отношениях с НАТО в 90-е годы. В статье отмечается, что желание официального Еревана не портить отношения со своей главной союзницей Москвой только одна из причин вышеупомянутой пассивности. Финансовые трудности первых лет независимости и слабая межведомственная координация действий зачастую не позволяли стране по-настоящему активизировать свои усилия по углублению отношений с центральной организацией системы европейской безопасности послесоветской эры.

AGHASI HARUTYUNYAN – *The first stage in Armenia and NATO cooperation (1990s)*. – The history of cooperation between Armenia and NATO may be tentatively divided into two stages. The first, relatively passive stage includes the 1990s when the newly independent Republic of Armenia and the North Atlantic Alliance initiated their relations on different levels and in different areas. The second, more dynamic stage in the development of mutual ties owes the establishment of strong partnership relations to the significant efforts of the parties.

Based on archival materials, the paper discusses some of the reasons of the Armenian sluggishness in the relations with NATO in the 1990s. It is also noted that Yerevan's desire not to spoil the relations with Armenia's key ally, Moscow, was only one of the causes of the Armenian passivity. The financial difficulties of the first years of independence and weak inter-departmental coordination of actions did not allow the country to actually stimulate its efforts aimed at advancing the relations with the central organization in the system of European security of the post-Cold War era.